16 ապրիլի 2015 թվականի N 397 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10-Ի N 1594-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի նոյեմբերի 10-ի «Մի շարք բնապահպանական միջազգային կոնվենցիաներից բխող՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունների կատարման միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 1594-Ն որոշման հավելվածի ցանկի «I. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա» բաժնում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«	1.	Ազգային մակարդակով սահմանված նախատեսվող գործողությունների փաստաթղթի (Intended Nationally Determined Contributions, INDC) մշա-	4.1 b) 4.1 e) 4.1 f) 12	Ամրագրել և ապահովել կոնվենցիայի կողմ երկրների 20-րդ համաժողովում ընդունված «Կլիմայական գործողու-	ՀՀ բնապահպանության նախարարություն ՀՀ տարածքային կառավարման և	2015 թ.	Օրենքով չարգելված աղբյուրներ

	կումը՝ ընդգրկելով կլիմայի մեղմման և էկոհամակարգային մոտեցմամբ հարմարվողականության գործողությունները և այն Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնելը		թյունների Լիմայի կոչ» փոխզիջումային որոշման կատարումը	արտակարգ իրավիճակների նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ՀՀ գյուղատնտեսության նախարարություն ՀՀ առողջապահության նախարարություն			».

2) ուժը կորցրած ճանաչել 6-րդ կետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ